

Արթիկ համայնքի 2025 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից, խորհրդակցական կարգով գործող ՀԶԾ կառավարման հանձնաժողովի կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2025թ-ի փետրվարի 20-ի թիվ 9-Ա որոշմամբ

2025թ.

Բովանդակություն

NO TABLE OF CONTENTS ENTRIES FOUND.

Ներածություն

2021 թվականի դեկտեմբերի 5-ին <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի պահանջով ձևավորվեց Արթիկ համայնքը՝ իր մեջ ներառելով 24 բնակավայրեր՝ Արթիկ քաղաքը և 23 գյուղեր՝ Արևշատ, Գեղանիստ, Գետափ, Լեռնակերտ, Լուսակերտ, Հայկասար, Հայրենյաց, Հառիճ, Հոռոմ, Հովտաշեն, Մեծ Մանթաշ, Մեղրաշեն, Նահապետավան, Նոր Կյանք, Պեմզաշեն, Սարալանջ, Սարատակ, Սպանդարյան, Վարդաքար, Տուֆաշեն, Փանիկ, Փոքր Մանթաշ, Անուշավան:

Տարեկան պլանավորումը հնարավորություն է տալիս ի մի բերել տարբեր աղբյուրներից (համայնքի և պետական բյուջեներ, սփյուռք, դոնոր, միջազգային, հասարակական կազմակերպություններ, ձեռներեցներ, բարերարներ, միջհամայնքային ծրագրեր և այլն) ֆինանսավորվող ծրագրերն ու միջոցառումները: Տարեկան աշխատանքային պլանի միջոցով հստակեցվում են հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված տարեկան կտրվածքով անելիքները, ծրագրերը և միջոցառումները, որոնք

բխում են երկարաժամկետ ռազմավարական նպատակներից: Այն նպաստում է ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված ծրագրերի և միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման ռազմավարության հստակեցմանը՝ նախանշելով այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են համայնքում լրացուցիչ միջոցներ ներգրավելու համար՝ համագործակցելով պետական, միջազգային, հանրային և մասնավոր գործընկերների հետ:

ՏԱՊ-ը բաղկացած է 5 բաժիններից, 1-ին բաժնում ներկայացված է՝ համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (Աղյուսակ1), ոլորտային նպատակները (Աղյուսակ 2):

ՏԱՊ-ի 2-րդ բաժնում բերված են համայնքի 2025թ. համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերիցանկը (Աղյուսակ3) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (Աղյուսակ 5), ինչպես նաև այն ծրագրերի ցանկը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (Աղյուսակ4):

ՏԱՊ-ի 3-րդ բաժնում ներկայացված է՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման2025թ..ծրագիրը (Աղյուսակ6):

ՏԱՊ-ի 4-րդ բաժնում բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (Աղյուսակ7):

ՏԱՊ-ի 5-րդ բաժնում ներկայացված է՝տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ (Աղյուսակ8):

1.Արթիկ համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Արթիկ համայնքը բարեկարգ և զարգացող գեղատեսիլ համայնք է՝ հագեցած ենթակառուցվածքներով, պատմամշակութային հուշարձաններով, որտեղ կան բոլոր հնարավոր միջոցները՝ համայնքը դարձնելու գրավիչ զբոսաշրջության համար, ինչպես նաև՝ հարմարավետ ու ապահով թե՛ քաղաքային և թե՛ գյուղական բնակչության համար: ՏԻ մարմինների նպատակն է համայնքային ենթակառուցվածքները դարձնել առավել մատչելի և որակյալ, ստեղծել հարմարավետ պայմաններ բարեկեցիկ կյանքի համար, կրթական, մշակութային և մարզական հաստատությունները շահառու խավերի համար դարձնել առավել որակյալ, երիտասարդության ժամանցի կազմակերպման համար ստեղծել պայմաններ, համայնքի բնակիչներն ունենան բարելավված կենցաղային պայմաններ: Համայնքի բնակչությանը մատուցվում են բարձրակարգ հանրային ծառայություններ, իսկ բնակիչները ձևավորել են ամուր քաղաքացիական հասարակություն:

Դրանց հասնելու ռազմավարական նպատակներն են՝

- Չարգացնել տեղական ինքնակառավարումը, այն դարձնել ավելի արդյունավետ, թափանցիկ, հաշվետու և մասնակցային,
- ՏԻՄ և համայնքապատկան կազմակերպությունների և ընկերությունների կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները դարձնել ավելի որակյալ, ստեղծել քաղաքացիներին, հյուրերին և ներդրողներին ավելի հարմարավետ քաղաքային, հասարակական և գործարար միջավայր:խթփձ
- **Համայնքի բնակչության՝ 52921, որից 49,3%-ը կանայք են, 50.7%-ը՝ տղամարդիկ:**

Բնակչության տարիքային կազմը՝

- 0-3 տարեկանները 2627անձ են, որոնցից 1218-ը աղջիկներ են, 1409-ը՝ տղաներ:
- 4-6 տարեկան երեխաների թիվը՝ 1871-ն է, որից աղջիկ՝ 881-ը, տղաները՝ 990:
- 7-18 տարեկանները 8437 հոգի են, որոնցից 3944-ը աղջիկներ են, 4493-ը՝ տղաներ:
- 19-35 տարեկանները 12459-ն են, որից 5885-ը՝ կին, 6574-ը՝ տղամարդ:
- 36-55 տարեկանները 14528-ն են, որից 7005-ը՝ կին, 7523-ը՝ տղամարդ:
- 56-63 տարեկանները 5766 հոգի են, որոնցից 2926-ը կին, 2840-ը՝տղամարդ:
- 18-63 տարեկանները 33315 հոգի են, որոնցից 16108-ը կին, 17207-ը՝ տղամարդ
- 64-ից բարձր տարեկանները 7233հոգի են, որոնցից 4275-ը՝կին,2958-ը՝տղամարդ:
- Նպաստառուները 1950-ն են

Հատուկ կարիքներ ունեցող խմբերը՝

- Հաշմանդամություն ունեցող անձինք **2893** են, որոնցից **1308**-ը կին, **1585**-ը՝ տղամարդ:
- Կենսաթոշակառուները 6105-ն են, որոնցից 3690-ը կին, 2415-ը՝ տղամարդ:
- Միայնակ կենսաթոշակառուները 190 հոգի են, որոնցից 150-ը կին, 40-ը՝տղամարդ:
- Նպաստառու ընտանիքները 1803 են, որից 1286-ը՝ կին գլխավորով ընտանիքներ են,

Տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ ՏԱՊ) համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային,

բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:¹

Համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

- համակարգելու տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) տվյալ տարվա անելիքները,
- սահմանելու սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատելու համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառելու համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկելու համախառն ռեսուրսները և բացահայտելու պակասուրդը (դեֆիցիտը),
- համախմբելու համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (այսուհետ՝ ՀՀԶԾ) սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- շաղկապելու նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- որոշակիացնելու նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակելու տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

1 «Մեթոդական ուղեցույց համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման», ԳՄՀԸ, ՀՖՄ, 2017:

Արթիկ համայնքում իրականացվող ծրագրերի ցանկ

1. Արթիկ համայնքի թվով 14 բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների տուֆ քարով սալապատում:

Բնակավայրերում ճանապարհները գրունտային են, դժվար անցանելի և ունեն բարեկարգման խիստ անհրաժեշտություն, որոնցով պայմանավորված՝ դժվարացած է երթևեկությունը ոչ միայն բնակիչների, այլ նաև շտապօգնության մեքենաների համար: Բանի որ ֆինանսական միջոցները բավարար չեն ճանապարհներն ասֆալտապատելու համար, ուստի նպատակահարմար է տուֆ քարով սալապատումը: Ճանապարհների տուֆ քարով սալապատման ծրագրովկապահովվի բնակավայրերի համաչափ զարգացումը, բնակավայրերի բնակչության համար կստեղծվի հարմարավետություն տեղաշարժվելու առումով: Բնակավայրերի փողոցների վերանորոգումը, որպես համայնքային կարևորագույն ենթակառուցվածք, կլինի շարունակական, որը հնարավորություն կտա բնակչության ազատ տեղաշարժին և տրանսպորտային միջոցների անխափան աշխատանքին, ծրագրի իրականացումով Արթիկ համայնքի թվով 14 բնակավայրերում՝ Արթիկ, Հովտաշեն, Անուշավան, Սպանդարյան, Սարատակ, Վարդաքար,Տուֆաշեն, Սարալանջ, Նոր Կյանք, Հոռոմ, Փանիկ,Լեռնակերտ,Պեմգաշեն, Նահապետավան բնակավայրերում կկառուցվի 14491 մետր /73163քմ/տուֆ քարով ճանապարհ, որից կօգտվեն 40953 մարդ:

2. Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի թվով 26 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում:

Արթիկի բազմաբնակարան շենքերը կառուցվել են 1970-1980-ական թվականներին, որոնցից շատերը մինչ օրս որևէ վերանորոգում չեն ունեցել: Շենքերի տանիքները մաշված են, կարիք ունեն հիմնանորոգման, որովհետև վաղուց արդեն շահագործման ժամկետներն ավարտվել են, տարիներով սպասարկում չի իրականացվել: Վատ վիճակում գտնվող տանիքների պատճառով շենքերի, հատկապես 5-րդ հարկի բնակիչները միշտ ունենում են բնակարանների վերանորոգման կարիք, քանի որ անձրևների և ձյան հալոցքների պատճառով առաստաղներից ջրի ներհոսք է տեղի ունենում, որը փչացնում է բնակարանները:

Նախատեսվում է Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի թվով26 բազմաբնակարան շենքերի տանիքների՝ Անկախության 15 հասցեում՝ 414 քմ, Սասունցի Դավիթ 19 հասցեում՝ 236 քմ, Տոնականյան 3 հասցեում՝ 332 քմ, Ծինարարների 5 հասցեում՝ 930 քմ, Լմբատ 1 շենք 44 հասցեում՝ 196 քմ, Լմբատ 1 շենք 24 հասցեում՝ 228 քմ, Լմբատ 1 շենք 7 հասցեում՝ 194 քմ, Լմբատ 1 շենք 11 հասցեում՝ 234 քմ, Լմբատ 1 շենք 12 հասցեում՝ 234 քմ, Լմբատ 1 շենք 14 հասցեում՝ 234 քմ, Լմբատ 1 շենք 10 հասցեում՝ 234 քմ, Լմբատ 1 շենք 6 հասցեում՝ 232 քմ, Լմբատ 1 շենք 35 հասցեում՝ 244քմ, Լմբատ 1 շենք 43 հասցեում՝ 240 քմ, Լմբատ 2 շենք 1հասցեում՝ 206 քմ, Լմբատ 2 շենք 26 հասցեում՝ 206 քմ, Լմբատ 2 շենք 27 հասցեում՝ 206 քմ, Լմբատ 2 շենք 5 հասցեում՝ 206 քմ, Լմբատ 2 շենք 8 հասցեում՝ 206 քմ, Լմբատ 2 շենք 14 հասցեում՝ 206 քմ, Բաղրամյան 3 հասցեում 470քմ, Տոնականյան 4 հասցեում 332քմ, Տոնականյան 2 հասցեում 332 քմ,Սասունցի Դավիթ 5 հասցեում 236քմ,

Ծինարարանների 3 հասցեում 930քմ, Սասունցի Դավիթ 21 հասցեում 652 քմ, ընդամենը՝8370քմ տանիքների հին ծածկի փոխարինում նոր ցինկապատ թիթեյա ծածկով, տանիքակիր ծպեխների և ծպեխնակիր թեքանների ամբողջովին փոխարինում և համապատասխանեցում հակահրդեհային կանոններին:

Ծրագրի իրականացումով ՀՀ Ծիրակի մարզիԱրթիկ համայնքի Արթիկ բնակավայրի թվով 26 բազմաբնակարան շենքերը կունենան հիմնանորոգված տանիքներ,բազմաբնակարան շենքերի բնակիչները կապահովագրվեն անցանկալի անձրևաջրերի և հալոցքի ջրի ներհոսքից:

3. Արթիկ համայնքի Գեղանիստ և Արևշատ բնակավայրերի գազատարի ներքին ցանցի կառուցում:

Ծրագրի իրականացումով վերը նշված բնակավայրերում բնակչությունը հնարավորություն կունենա օգտվելու բնական գազից, որով կհոգա ջեռուցման և առօրյա հոգսերը: Բնակավայրերը գյուղական են, բնակարանների ջեռուցումը հիմնականում աթարով և վառելիքայտով է իրականացվում: Վառելիքայտ ներկա պահին անհնար է ձեռք բերել, քանի որ արգելված է ծառահատումը, իսկ աթարը հիմնականում չի բավականացնում ցուրտ բնակավայրերում բնակարանների ջեռուցման խնդիրը լուծելու համար: Գազատարի ներքին ցանցի կառուցումը հնարավորություն կտա բնակավայրերի բնակչությանն օգտվելու բնական գազից, որը կբարձրացնի մարդկանց բարեկեցության մակարդակը: Ծրագրի իրականացումով **Գեղանիստ** բնակավայրում՝22%-ով, **Արևշատ** բնակավայրում՝ 45%-ով կլուծվի գազամատակարարման խնդիրը:

Արթիկ համայնքի թվով 2 բնակավայրերի գազատարի ներքին ցանցը կկառուցվի, որը կտա հնարավորություն բնակչությանը օգտվելուկապույտ վառելիքից, կստեղծվի հարմարավետություն բնակչության համար:

Նոր կառուցվող գազատարից կօգտվեն մոտ 615 մարդ, 110 տնային տնտեսություններ:

4. Արթիկ համայնքի Սպանդարյան, Սարալանջ, Գետափ, Լուսակերտ, Գեղանիստ, Մեղրաշեն բնակավայրերի ոռոգման համակարգերի կառուցում:

Բոլոր բնակավայրերումոռոգման համակարգերը բնական առուներ են, որի պատճառով ոռոգման սեզոնի ջրի կորուստը կազմում է մոտ 60-70%, բացի այդ, տեղի է ունենում բնական հունների էրոզիա: Ծրագրի իրականացման արդյունքում այդ բոլոր երևույթները կբացառվեն: Ոռոգման նոր համակարգի գործածելուց հետո ոռոգվող տարածքներն էականորեն կավելանան: Նախատեսվում է Սարալանջ բնակավայրում 1500 մետր, Սպանդարյան բնակավայրում 1500 մետր, Լուսակերտ բնակավայրում 250 մետր, Գեղանիստ բնակավայրի՝ 2-րդ,9-րդ, 10-րդ և 12-րդ փողոցների 1500 մետր,Գետափ բնակավայրի 4-րդ փողոցի 1000 մետր և Մեղրաշեն բնակավայրի 1200 մետր երկարությամբ հողային առուները փոխարինել բետոնյա կիսախողովակներով, որը կտա հնարավորություն ջրի կորուստները հասցնել նվազագույնի (60-70%-ի փոխարեն 5%):Մասնավորապես ոռոգման ջրի կորուստների նվազեցման հաշվին Սարալանջ բնակավայրում ոռոգվող 20հա, Սպանդարյան բնակավայրում 80հա, Լուսակերտ բնակավայրում 30 հա, Գեղանիստ բնակավայրում՝ 30հա, Գետափ բնակավայրում 15հա և

Մեղրաշեն բնակավայրում 30 հա տնամերձ հողամասերը մեկ անգամի փոխարեն կոռոզվեն 3-4 անգամ, որը կնպաստի բերքատվության բարձրացմանը և շահառուների եկամուտների եական աճին:

5. Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի Բաղրամյան փողոցի և Գարեգին Նժդեհ փողոցի վերջնամասի ասֆալտապատում:

Ծրագրի իրականացումով նախատեսվում է Արթիկ համայնքի **Արթիկ բնակավայրի Բաղրամյան փողոցի** Բաղրամյան-Արոլյան փողոցի խաչմերուկից մինչև Բաղրամյան-Տուֆագործներ խաչմերուկի 615գծ/մ ճանապարհի հիմնանորոգում, մայրերի և բազալտե եզրաքարերի կառուցում 793գծ/մ, ջրահեռացման համակարգի անցկացում 8000 գծ/մ, Բաղրամյան-Շահումյան խաչմերուկում գտնվող Էստակադայի հիմնանորոգում, կոյուղագծերի և դիտահորերի տեղադրում՝ ընդամենը 307մ երկարությամբ և 4մ լայնությամբ ընդհանուր 1228 քմ ճանապարհների ասֆալտապատում և 307 գծ/մ ջրահեռացման համակարգի անցկացում: Պեմզաշեն բնակավայրում նախատեսվում է 2-րդ փողոցի 530 գծ/մ 5մ երթևեկելի մասի լայնությամբ ճանապարհի ասֆալտապատում 2650քմ, 530գծ/մ ջրահեռացման համակարգի անցկացում և 325 գծ/մ մայրի կառուցում: 7-րդ փողոցի 524 գծ/մ 6մ երթևեկելի մասի լայնությամբ ճանապարհի ասֆալտապատում 3144քմ, 524գծ/մ ջրահեռացման համակարգի անցկացում և 524գծ/մ մայրի կառուցում: 6-րդ փողոցի 180 գծ/մ 4մ լայնությամբ ճանապարհի ասֆալտապատում ընդամենը 720 քմ և 180 գծ/մ ջրահեռացման անցկացում: 13-րդ փողոցի 170 գծ/մ 4մ լայնությամբ ճանապարհի ասֆալտապատում՝ ընդամենը 680 քմ և 170 գծ/մ ջրահեռացման անցկացում:

Ծրագրի իրականացումով Արթիկ բնակավայրը կունենա ևս 1228քմ բարեկարգ ասֆալտապատ ճանապարհ, 307 մետր ջրահեռացման համակարգ: Պեմզաշեն բնակավայրը կունենա ևս 7194 քմ բարեկարգ ասֆալտապատ ճանապարհներ, 1404 մետր ջրահեռացման համակարգ և 1019 մետր բարեկարգ մայրեր: Արթիկ և Պեմզաշեն բնակավայրերի բնակչության համար կստեղծվի հարմարավետ տեղաշարժվելու հնարավորություն: Բնակչության տեղաշարժը, ինչպես նաև տրանսպորտային միջոցների տեղաշարժը կլինի հարմարավետ:

6. Արթիկ համայնքի <<Արթիկի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի, <<Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի, <<Մեծ Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի և <<Համիճի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի շենքերի հիմնանորոգում

2025 թվականին նախատեսվում է հիմնանորոգել և համապատասխան գույքերով կահավորել Արթիկ բնակավայրի <<Արթիկի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի Անկախության 20/1 հասցեում գտնվող երկհարկանի շենքը՝ 1300 քմ մակերեսով, Փոքր

Մանթաշ բնակավայրի 7-րդ փողոց 8 հասցեում գտնվող <<Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի միահարկ շենքը՝ 605 քմ մակերեսով, Մեծ Մանթաշ բնակավայրի 1-ին խճուղի 11-րդ հասցեում գտնվող <<Մեծ Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի միահարկ շենքը՝ 477 քմ մակերեսով և Հառիճ բնակավայրի 20-րդ փողոց 6 հասցեում գտնվող <<Հառիճի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի միահարկ շենքը՝ 491 քմ մակերեսով: Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի Անկախության 20/1 հասցեում գտնվող թիվ 2 մանկապարտեզի շենքը գտնվում է վատ վիճակում, որը հնարավորություն չի տալիս կազմակերպել մանկապարտեզ հաճախող երեխաների համար հարմարավետ միջավայր: Ջեռուցման հետ կապված խնդիրների պատճառով մանկապարտեզում հնարավոր չի լինում ապահովել համապատասխան ջերմություն: Մանկապարտեզում գործում է 4 տարիքային խմբեր՝ 120 սաների համար: Արթիկ համայնքի <<Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի շենքն ունի տանիքի հիմնանորոգման, դռների և պատուհանների, խոհանոցի, սանհանգույցի և ջեռուցման համակարգի տեղադրման, տարածքի բարեկարգման և խաղահրապարակի կառուցման կարիք, որպեսզի հաճախող երեխաներն ավելի հարմարավետ պայմաններում շարունակեն իրենց նախադպրոցական կրթությունը: Ներկա պահին ունի 61 երեխաների համար նախատեսված երկու խումբ: ՀՀ Ծիրակի մարզի Արթիկ համայնքի <<Մեծ Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի շենքը գտնվում է վատ վիճակում, տանիքից թափվող անձրևաջրերի հետևանքով առկա է արտաքին և ներքին պատերի խոնավեցում, որն էլ իր հերթին առաջացնում է հակասանիտարական վիճակ: Ծենքն ունի դռների և պատուհանների, խոհանոցի, սանհանգույցի և ջեռուցման համակարգի տեղադրման, տարածքի բարեկարգման և խաղահրապարակի կառուցման կարիք: Գործում է երկու խումբ՝ ընդհանուր 60 երեխայի համար նախատեսված: Հառիճ բնակավայրի 20-րդ փողոց 6 հասցեում գործող Արթիկ համայնքի <<Հառիճի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի միահարկ շենքը կառուցվել է 1975 թվականին, որից հետո չի վերանորոգվել: Հաճախող երեխաների թիվը կրճատվել է, քանի որ չունի համապատասխան շենքային պայմաններ: Այս պահին ունի երկու խումբ՝ ընդհանուր 55 երեխա: Հառիճ բնակավայրը բարձր լեռնային է, ուստի անհրաժեշտ է, որ բնակավայրն ունենա նորմալ վերանորոգված և ջեռուցումով ապահովված նախադպրոցական ուսումնական հաստատության շենք, որտեղ կհաճախեն բոլոր տարիքային խմբի երեխաները: Ծենքն ունի տանիքի հիմնանորոգման, դռների և պատուհանների, խոհանոցի, սանհանգույցի և ջեռուցման համակարգի տեղադրման, տարածքի բարեկարգման և խաղահրապարակի կառուցման կարիք: Բոլոր մանակապարտեզները շահագործման օրվանից մինչ օրս նոր գույքով չեն համալրվել, եղած գույքը ժամկետանց է և պիտանի չէ հետագա օգտագործման համար: Հիմնանորոգումից հետո բոլոր մանկապարտեզները, ըստ համապատասխան տարիքային խմբերի, կապահովվեն համապատասխան գույքով:

7. Արթիկ համայնքի թվով 4 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների շենքերի վերանորոգում

2025 թվականին նախատեսվում է Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի Բաղրամյան 9/1 հասցեում գտնվող Արթիկ համայնքի <<Արթիկի գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի երկհարկանի շենքը՝ 504 քմ մակերեսով և շենքի տանիքը՝ 360 քմ մակերեսով,

Անկախության 20 հասցեում գտնվող Արթիկ համայնքի<<Արթիկի Միսաք Մանուշյանի անվան գեղագիտական դաստիարակության կենտրոն>> ՀՈԱԿ-ի երկհարկանի շենքը՝ 560 քմ մակերեսով, Անկախության 42 հասցեում գտնվող Արթիկ համայնքի <<Արթիկի մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի շենքի տանիքը՝ 803 քմ մակերեսով և Անուշավանի բնակավայրի 1-ին փողոց 2 հասցեում գտնվող Արթիկ համայնքի <<Անուշավանի Սուրեն Սոյսանի անվան արվեստի և սպորտի դպրոց>> ՀՈԱԿ-ի շենքի՝ 230 քմ մակերեսով մարզադահլիճի վերանորոգում: ՀՀ ՇՄ Արթիկ համայնքի<<Արթիկի գեղարվեստի դպրոց >> ՀՈԱԿ-ի շենքը կառուցվել է 1955թ-ին, բայց մինչ օրս վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել, ուստի շենքն ունի վերանորոգման կարիք, որպեսզի հաճախող երեխաների համար ստեղծվեն հարմարավետ պայմաններ՝ ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար: Ներկա պահին <<Արթիկի գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ում կա 15 խումբ՝ նախատեսված 152 երեխայի համար: Անհրաժեշտ է վերանորոգել շենքի տանիքը, հին դռներն ու պատուհանները փոխարինել նոր դռներով ու պատուհաններով, միջանցքները և սանհանգույցները սալիկապատել կերամիկական սալիկներով և կատարել ընդհանուր կոսմետիկ վերանորոգում: <<Արթիկի Միսաք Մանուշյանի անվան գեղագիտական դաստիարակության կենտրոն>> ՀՈԱԿ-ում գործում է 12 (խոհարարական, մաթեմատիկայի, հելունագործության, հագուստի մոդելավորման, տարրական դասընթացների ուսուցման, հմուտ ձեռքերի, նկարչության, ասմունքի, արտոդիզայնի, անգլերենի, ռուսերեն և ֆրանսերեն լեզուների) խումբ՝ նախատեսված 196 երեխայի համար: Անհրաժեշտ է անցկացնել ջեռուցման համակարգ, որպեսզի ձմռան ամիսներին ուսումնական գործընթացն անցկացվի հարմարավետ պայմաններում: Շենքի տանիքը վերանորոգման կարիք չունի, դռներն ու պատուհանները նոր են, ուստի անհրաժեշտ է անցկացնել ջեռուցման համակարգ, որպեսզի ձմռան ամիսներին ուսումնական գործընթացն անցկացվի հարմարավետ, տաք պայմաններում: ՀՀ ՇՄ Արթիկ համայնքի <<Արթիկ մարզադպրոց>> ՀՈԱԿ-ում գործում է 9 խումբ՝ նախատեսված 108 երեխայի համար: Հիմնականում երեխաները մարզվում են վոլեյբոլ և բասկետբոլ սպորտաձևերով: Ընդհանուր շենքային պայմանները բավարար են երեխաների նորմալ մարզումների համար, սակայն շենքի տանիքն ունի խնդիրներ. անձրևների և ձյան հալոցքի հետևանքով շենքի դահլիճում կան կաթոցներ և ջրի ներհոսք, ուստի անհրաժեշտ է տանիքի կրող կոնստրուկցիաները փոխարինել նորով և հին ծածկը փոխարինել նոր ցինկապատ թիթեղներով: Նախատեսվում է նաև ՀՀ ՇՄ Արթիկ համայնքի <<Անուշավանի Սուրեն Սոյսանի անվան արվեստի և սպորտի դպրոցի>> ՀՈԱԿ-ի շենքի մարզադահլիճի վերանորոգում և միջանցքի սալիկապատում՝ կերամիկական սալիկներով: Շենքային պայմանները վատ վիճակում են, դրա համար ներկա պահին չի գործում:

8. Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի կարիքների համար աղբատար մեքենաների և աղբամանների ձեռքբերում:

2025 թվականին նախատեսվում է Արթիկ համայնքի կոմունալ ծառայությունների որակի բարելավման համար ձեռք բերել երկու աղբատար մեքենա և 200 հատ փակ կափարիչներով աղբամաններ: Ներկա պահին Արթիկ բնակավայրում կա մեկ աղբատար մեքենա, որը չի կարող լիովին կազմակերպել քաղաքի աղբահանությունը, քանի որ բաց թափքով բեռնատար է: Աղբն աղբավայր տեղափոխելիս բեռնատարի թափքից կենցաղային աղբը թափվում է ճանապարհներին և առաջացնում հակասանիտարական վիճակ: Արթիկ բնակավայրի տարածքում տեղադրված են թվով 200 աղբամաններ, որտեղ օրական

կուտակվում է մոտավորապես 40տոննա, մոտ 30իսմ աղբ: Քանի որ գոյություն ունեցող մեքենայի բեռնատարողությունը մոտավորապես 4 իսմ է, ուստի ֆիզիկապես հնարավոր չէ 30իսմ աղբը 1 օրվա ընթացքում տեղափոխել աղբավայր: Բացի այդ, աղբամանները չունեն կափարիչներ, ֆիզիկապես մաշված և ժամկետանց են, որի պատճառով թափառող շներն անընդհատ տարածքում ստեղծում են հակասանիտարական վիճակ: Նախատեսվում է ձեռք բերել երկու ժամանակակից նոր աղբատար մեքենաներ, որոնք լիովին կբավարարեն Արթիկ բնակավայրում աղբահանության պատշաճ իրականացմանը: Նախատեսվում է նաև ձեռք բերել 200 փակ աղբամաններ, որոնք հարմարեցված կլինեն նոր աղբատար մեքենաների համար և գերծ կպահեն տարատեսակ թափառող շների կողմից կենցաղային աղբի տարածմանը: Կբարելավվի կոմունալ ծառայությունների որակը, չի վտանգվի համայնքի բնակիչների առողջությունը, չի առաջացնի շրջակա միջավայրի աղտոտման խնդիր:

9. Արթիկ համայնքի Վարդաքար բնակավայրի վարչական շենքի երկրորդ հարկի միջանցքի և մեկ սենյակի վերանորոգման, Հոռոմ և Հայրենյաց բնակավայրերի մեծահասակների համար նախատեսված խաղասենյակների վերանորոգում

Նախատեսվում է բնակավայրերի մեծահասակների համար նախատեսված սենյակները վերանորոգել: Մասնավորապես Հոռոմ բնակավայրում մեծահասակների համար նախատեսված 28 քմ խաղասենյակի վերանորոգում և փայտից դռների փոխարինում մետաղապլաստե դռներով՝ 3,78 քմ: Վարդաքար բնակավայրում վարչական շենքի 41 քմ սենյակի և միջանցքի վերանորոգում, դռան փոխարինում 1,60 քմ: Հայրենյաց բնակավայրում մեծահասակների համար նախատեսված 50քմ խաղասենյակի վերանորոգման աշխատանքների իրականացում:

10. Արթիկ համայնքի Անուշավան և Վարդաքար բնակավայրերի ոռոգման համակարգերի կառուցում:

Անուշավան և Վարդաքար բնակավայրերի ոռոգման համակարգերը բնական առուներ են, որի պատճառով ոռոգման սեզոնի ջրի կորուստը կազմում է մոտ 60-70%, բացի այդ տեղի է ունենում բնական հունների երոզիա: Ծրագրի իրականացման արդյունքում այդ բոլոր երևույթները կբացառվեն: Ոռոգման նոր համակարգի գործածելուց հետո ոռոգվող տարածքներն էականորեն կավելանան: Նախատեսվում է Անուշավան բնակավայրում 2145 մետր և Վարդաքար բնակավայրում 1515 մետր հողային առուները փոխարինել բետոնյա կիսախողովակներով և պոլիէթիլենային (325 միլիմետր տրամաչափի) խողովակներով, որը կտա հնարավորություն ջրի կորուստները հասցնել նվազագույնի՝ 60-70%-ով:

Ծրագրի իրականացման արդյունքում Անուշավան բնակավայրում՝ 2145 մետր և Վարդաքար բնակավայրում՝ 1515 մետր հողային առուները կփոխարինվեն բետոնյա կիսախողովակներով և պոլիէթիլենային (325 միլիմետր տրամաչափի) խողովակներով, որը կտա հնարավորություն ջրի կորուստները հասցնել նվազագույնի (60-70%-ի փոխարեն 15-20%): Ծրագրի իրականացումով Անուշավան բնակավայրում կոռոգվի շուրջ 150 հա և Վարդաքար բնակավայրում շուրջ 60 հա տնամերձ հողամասեր: Սուբվենցիոն ծրագիրը 2024 թվականից տեղափոխվել է 2025 թվական:

11. Արթիկ համայնքի Սարալանջ բնակավայրի մշակույթի տան ջեռուցման հանակարգի անցկացում:
12. Խաղահրապարակներ Արթիկ, Վարդաքար, Տուֆաշեն բնակավայրերում
13. Կանգառներ Նահապետավան բնակավայրում
15. Նոր Կյանք բնակավայրում համայնքային այգու բարեկարգում
16. ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կարիքների համար Լեռնակերտ, Սպանդարյան, Գեղանիստ, Գետափ, Անուշավան, Սարատակ, Մեծ Մանթաշ բնակավայրերում վերանորոգման աշխատանքներ
17. Արթիկ և Արևշատ բնակավայրերում նոր մանկապարտեզների կառուցում:
ՀՀ Կառավարության ֆինանսավորմամբ Արթիկ համայնքի Արթիկ և Արևշատ բնակավայրերում կառուցվում են նոր մանկապարտեզներ՝ յուրաքանչյուրը 145 երեխայի համար:
18. ՀՀ Կառավարության ֆինանսավորմամբ Արթիկ բնակավայրում կառուցվում է հիվանդանոց 3.300.000.000 ՀՀ դրամ արժեքով:
19. ՀՀ Կառավարության ֆինանսավորմամբ նախատեսվում է հիմնանորոգել <<Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ը՝ 68 000 000 ՀՀ դրամ:
20. Շարժական գյուղատնտեսական շուկայի կառուցում
21. Երթուղային միկրոավտոբուսի ձեռքբերում՝ ներքաղաքային ուղևորափոխադրումներ իրականացնելու համար
22. Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Յուրի Գաֆարինի անվան զբոսայգու վերանորոգում
23. Արթիկ համայնքի Պեմգաշեն բնակավայրի զբոսայգու բարեկարգում
24. Պեմգաշեն բնակավայրում մոտ 80 հա անտառի հիմնում
25. Արթիկ համայնքի Տուֆաշեն բնակավայրի մինիֆուտբոլի դաշտի կառուցում:
26. Արթիկի կենտրոնական հրապարակի օղակաձև հատվածում նոր շատրվանների տեղադրում

27. Տոնականյան 23 և 24 հասցեների բազմաբնակարան շենքերին հարակից տարածքում ունիվերսալ բազմաֆունկցիոնալ բակային սպորտային խաղահրապարակի կառուցում՝ ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի համար

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	2.6	2.5
Համայնքի բյուջեի սեփական եկամուտները հազ. Դրամ	605399.2	670882.1
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ), այդ թվում՝	52921	
կին	26135	26135
տղամարդ	26786	26786
Գործազրկության մակարդակը համայնքում(մարդ),որից՝	820	800
կին	538	548
տղամարդ	282	252
Գյուղատնտեսական ոլորտում զբաղվածները, որից՝	17000	17100
կին	10000	10050
տղամարդ	7000	7050
Ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածները, որից՝	8000	8080
կին	4220	4240
տղամարդ	3780	3840

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
Բարելավել համայնքի բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ների գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, մատչելիությունից%, որից	75	77
	Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, % որից	24	25
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	22.4	22.6
	ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %, որից՝	85	87
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում, քաղաքացիական պաշտպանություն			
Բնակչության անվտանգության ապահովման կազմակերպում	Տարհանման պլանի առկայություն, պատասխանատուների նշանակում,	այո	այո
	Փորձնական տարհանումների կազմակերպում	60	67
	Ազդանշանային համակարգերի առկայություն	այո	այո
Նպաստել երկրի պաշտպանուն ակության մակարդակի բարձրացմանը	Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարումը, այո/ոչ	այո	այո
	Չորակոչիկների բավարարվածությունը մատուցված ծառայություններից %	60	70
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն			
Տարերային աղետներից, սելավներից, գարնանային հեղեղումներից, վթարային շենքերից բնակիչների պաշտպանության	Քարաթափության, սեյսմավտանգ տեղամասերի քարտեզների առկայություն, այո, ոչ	այո	այո
	Սելավատարների մաքրման աշխատանքների իրականացում աշնանը և գարնանը՝ օգտագործելով համայնքի տեխնիկան	այո	այո

կազմակերպում, տուժած բնակիչներին մասնակի նյութական, աշխատանքային օգնության տրամադրում			
Ոլորտ 4. Գյուղատնտեսություն			
Ստեղծել գյուղատնտեսությ ան զարգացման համար նպաստավոր պայմաններ	Անասնապահության բնագավառում զբաղվածության աճը նախորդ տարվա համեմատ, %, որից կին տղամարդ	4 2 2	3 2 1
	Հողագործության բնագավառում զբաղվածության աճը նախորդ տարվա համեմատ, %, որից կին տղամարդ	3 2 1	3 2 1
	Ոչխարաբուծության խթանման նպատակով նոր ցեղատեսակների բուծման համար նախադրյալների ստեղծում, նոր ցեղատեսակի ոչխարների թվի ավելացում	30	20
Բարձրացնել հողօգտագործման արդյունավետությո ւնը	Հացահատիկի և հատիկալնդեղենի համախառն բերքի աճ՝ ցենտներով	15	20
Ոռոգելի մշակաբույսերի ցանկատարածությ ունների մակերեսի ավելացում	Բարելավված ոռոգման համակարգ ունեցող բնակավայրերի տեսակարար կշիռը համայնքի բնակավայրերի կազմում %	30	34
Ստեղծել բարենպաստ պայմաններ գյուղատնտեսությ ան զարգացման համար:	Բարելավված դաշտամիջյան ճանապարհների երկարությունը ընդհանուրի մեջ, %	60	67
Պետական գյուղատնտեսակա ն աջակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական հանդիպումների կազմակերպում, հանդիպումների թիվը,	Աշխատողների տեսակարար կշռի ավելացում՝ %	2	4

Ոլորտ 5.Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
Մտեղծել անասնաբուծությամբ և բուսասանիտարիայի զարգացման համար նպաստավոր պայմաններ	Անասնաբուծական կետերի քանակը	2	2
Խոշոր եղջերավոր անասունների արհեստական սերմնավորման ծրագրի ծավալների խթանում	Խոշոր եղջերավոր անասունների նոր ցեղատեսակների անասնագլխաքանակի ավելացում՝ գլխաքանակ	1500	1200
Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացում, որակի բարելավում և հիվանդությունների կանխում	Մսի և մսամթերքի վերամշակման կետերի թվի ավելացում՝ հատ	3	4
Անասնաբուծական ծառայությունների մատուցում համայնքի բոլար բնակավայրերում	Մատուցվող անասնաբուծական ծառայությունների հասանելիությունը համայնքի բոլոր բնակավայրերում այո/ոչ	այո	այո
Գյուղատնտեսության բնակավայրում խորհրդատվական ծառայությունների մատչելիության աճ	Ոսուցողա-խորհրդատվական ծառայություններից օգտվող ֆերմերների տեսակարար կշռի աճ՝ %	50	52
Ոլորտ 6. Տրանսպորտ			
Ապահովել տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը՝ ճանապարհների բարեկարգման միջոցով	Ճանապարհների բարեկարգման միջոցով երթևեկության անվտանգության աճ %	65	75
Ապահովել համայնքի ներքաղաքային ուղևորափոխադրող մեքենաների	Ներքաղաքային ուղևորափոխադրող մեքենաների	0	5%
Ոլորտ 7.Առևտուր և ծառայություններ			

2025 թվականին բարձրացնել առևտրի և սպասարկման ծառայությունների որակը, բարելավել սննդի անվտագությունը, անվտանգության նորմերը համապատասխանեցնել պետական սահմանված նորմերին:		Բնակչության բավարարվածության աստիճանը %, Հավաքագրված ֆինանսական միջոցների տոկոս սեփական եկամուտների մեջ	35	42
Ոլորտ8.Շրջակա միջավայրի պահպանություն				
Համայնքը դարձնել մաքուր և բարեկարգ, շարունակել բոլոր 24 բնակավայրերում կանոնավոր աղբահանություն	Աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ ծառայությունների մատուցումից բնակչության բավարարվածության աստիճանի բարձրացումը (հարցումների հիման վրա), %որից	85	88	
	կին	58	55	
	տղամարդ	27	33	
	Համայնքում հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակի տեսակարար կշիռը համայնքում առաջացած աղբի ընդհանուր քանակի մեջ, %	60	70	
Ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ	Համայնքի խնամվող կանաչապատ հատվածների տեսակարար կշիռը կանաչապատ հատվածների մեջ, %	15	20	
Ոլորտ 9. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն				
Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը	Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, %, որից`	82	85	
	կին	49	49	
	տղամարդ	33	36	
	Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից, %, որից`	92	95	
	կին	56	58	
	տղամարդ	36	37	
	Բնակչության բավարարվածության աստիճանը միջբնակավայրային ճանապարհների վիճակից, %, որից`	35	40	
	կին	9	12	
	տղամարդ	26	28	

Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը	Համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի բարելավված վիճակը, % Որից՝	77	80
	Կին	37	39
	տղամարդ	40	41
Ոլորտ 10. Հողօգտագործում			
2025 թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել		-	-
Ոլորտ 11. Կրթություն			
Ապահովել համայնքի բնակիչներին նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ծառայությունների մատուցումը	Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, %	20	30
	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, % որից՝	80	85
	կին	70	75
	տղամարդ	9	10
	Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	50	55
	Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թիվը՝ որից աղջիկ տղա	1229 900 329	1586 1086 500
	Արվեստի կենտրոնների աշխատակիցների քանակը	335	337
	Հոռոմ բնակավայրում նախադպրոցական կրթության ապահովում 75 երեխայի համար, որից՝ աղջիկ տղա	0 0 0	75 40 35
	Արևշատ բնակավայրում նախադպրոցական կրթության ապահովում, 144 երեխայի համար, որից՝ աղջիկ տղա	0 0 0	144 80 64
	Լեռնակերտ բնակավայրում ՆՈՒՀ-ի շենքի վերանորոգում և 60 երեխայի համար	60	60

	նախակրթարանի բացում, որից՝ աղջիկ տղա	22 38	22 38
	Մանկապարտեզներում նոր խմբերի ավելացման	39	45
	Դրա հետևանքով նոր ստեղծված աշխատատեղերի թիվը, որից՝		18
	կին		18
	տղամարդ	0	0
Ոլորտ 12. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը մշակույթի և երիտասարդության հետ տարվող որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %	75	77
	Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճը նախորդ տարվա համեմատ, % որից կին տղամարդ	16 14 2	18 16 2
Փանիկ բնակավայրում մշակույթի տան վերանորոգում, անհրաժեշտ գույքի ձեռք բերում	Բնակավայրում մշակույթի տան առկայություն	այո	այո
Ոլորտ 13. Առողջապահություն			
2025թվականի ընթացքում առողջապահության ոլորտում ֆինանսապես ապահովված ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել			
Ոլորտ 14. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
Համայնքում սպորտի զարգացման համար ստեղծել նախադրյալներ	Համայնքի ապահովվածությունը մարզադաշտերով և մարզադպրոցներով, %	10	10
	Մարզադպրոց հաճախող երեխաների թիվը, որից՝ աղջիկ տղա	360 60 300	390 90 300
	Մարզադահլիճ հաճախող բնակիչների թիվը, որից՝ կին տղամարդ	160 45 115	165 46 119
	Մարզային միջոցառումներին ներգրավված տարեցների թիվը կին տղամարդ	8 1 7	10 2 8

Ոլորտ 15.Սոցիալական պաշտպանություն			
Թեթևացնել համայնքում բնակվող անապահով ընտանիքների հոգսերը	Անապահով ընտանիքներին դրամական օգնության տրամադրում, հազ. դրամ	18000.0	18000.0
Ոլորտ 16. Չբուսաշրջություն			
2025 թվականին զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել			
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
2025 թվականին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ապահովում	Ավագանու նիստերի թիվը	13	14
	Բնակիչների հետ հանդիպումների թիվը	23	25
	Անցկացված հանրային լսումների թիվը	15	18
	Հանրային լսումներին մասնակցած բնակիչների թիվը, այդ թվում	300	450
	կին	130	150
	տղամարդ	170	300
	Լուսաբանված ավագանու նիստերի տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ	100	100

2. Համայնքի 2025 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Աղյուսակ 3. ՏՄՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
Ոլորտ 1. Ընդհանուր			
1.	Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում	689536.0	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		689536.0	
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
1.	Քաղաքացիական պաշտպանության կազմակերպում	4000.0	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		4000.0	
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
1.	Տարերային աղետներից, սելավներից, գարնանային հեղեղումներից, վթարային շենքերից բնակիչների պաշտպանության կազմակերպում, տուժած բնակիչներին մասնակի նյութական, աշխատանքային օգնության տրամադրում	15000.0	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		15000.0	
Ոլորտ 4. Գյուղատնտեսություն			
1.	Համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը.	55175.6	Անուշավան և Վարդաքար
2.	Արթիկ համայնքի բնակավայրերի ոռոգման համակարգերի կառուցում	162100,0	Մպանդարյան, Սարալանջ, Գետափ, Լուսակերտ, Գեղանսիտ, Մեղրաշեն
Ընդամենը			-
Ոլորտ 5. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
	Անասնաբուծական կետերի պահպանում	300.0	Ընդհանուր համայնքային
	Համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի աշխատանքներ	3000.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		3300.0	-

Ոլորտ 8.Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Համայնքի բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում	85000,0	Ընդհանուր համայնքային
2.	Սանիտարական ծառհատում, էտում, կանաչապատում	300,0	Ընդհանուր համայնքային
3.	Չբոսայգիների բարեկարգում	40 115,0	Արթիկ, Նոր Կյանք, Պեմգաշեն
4.	Անտառի հիմնում	000000	Պեմգաշեն/ ԷյԹիՓի ընկերություն/
Ընդամենը		125 415,0	-
Ոլորտ 9. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Արթիկ համայնքի թվով 14 բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների տուֆ քարով սալապատում:	601790,0	Արթիկ, Հովտաշեն, Մնուշական, Սպանդարյան, Սարատակ, Վարդաքար, Տուֆաշեն, Սարալանջ, Նոր Կյանք, Հոռոմ, Փանիկ, Լեռնակերտ, Պեմգաշեն, Նահապետավան
2.	Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի թվով 26 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում:	188134,0	Մնկախության 15` 414 քմ, Սասունցի Դավիթ 19` 236 քմ, Տոնականյան 3` 332 քմ, Ծինարարների 5` 930 քմ, Լմբատ 1 շենք 44` 196 քմ, Լմբատ 1 շենք 24` 228 քմ, Լմբատ 1 շենք 7` 194 քմ, Լմբատ 1 շենք 11` 234 քմ, Լմբատ 1 շենք 12` 234 քմ, Լմբատ 1 շենք 14` 234 քմ, Լմբատ 1 շենք 10` 234 քմ, Լմբատ 1 շենք 6` 232 քմ, Լմբատ 1 շենք 35` 244 քմ, Լմբատ 1 շենք 43` 240 քմ, Լմբատ 2 շենք 1` 206 քմ, Լմբատ 2 շենք 26` 206 քմ, Լմբատ 2 շենք 27` 206 քմ, Լմբատ 2 շենք 5` 206 քմ, Լմբատ 2 շենք 8` 206 քմ, Լմբատ 2 շենք 14` 206 քմ, Բաղդամյան 3` 470քմ, Տոնականյան 4` 332քմ, Տոնականյան 2` 332քմ Սասունցի Դավիթ 5` 236քմ, Ծինարարների 3` 930քմ, Սասունցի Դավիթ 21` 652 քմ,

3.	Արթիկ համայնքի թվով 6 բնակավայրերի ոռոգման համակարգերի կառուցում	162100.0	Սպանդարյան, Սարալանջ, Գետափ, Լուսակերտ, Գեղանիստ, Մեղրաշեն
4.	Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի Բաղրամյան փողոցի ասֆալտապատում	143150,0	Արթիկ
5.	Արթիկ համայնքի Գեղանիստ և Արևշատ բնակավայրերի բնակավայրերի գազատարի ներքին ցանցի կառուցում	67190,0	Գեղանիստ Արևշատ
6.	Արթիկ համայնքի 4 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների շենքերի վերանորոգում	123500,0	Արթիկ բնակավայր,Անուշավան բնակավայր
7.	Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի <<Արթիկի թիվ 2 մանկապարտեզ >> ՀՈԱԿԻ-ի, <<Փոքր Մանթաշի ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի, <<Մեծ Մանթաշ ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի և <<Հատիճի ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի շենքերի հիմնանորոգում	568132,1	Արթիկ, Փոքր Մանթաշ, Մեծ Մանթաշ և Հատիճ բնակավայրեր
8.	Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի կարիքների համար աղբատար մեքենաների և աղբամանների ձեռքբերում:	118000,0	Արթիկ
9.	Արթիկ համայնքի Վարդաքար բնակավայրի վարչական շենքի երկրորդ հարկի միջանցքի և մեկ սենյակի վերանորոգման, Հոռոմ և Հայաերենյաց բնակավայրերի մեծահասակների համար նախատեսված խաղասենյակների վերանորոգում	11 413,2	Վարդաքար, Հոռոմ Հայրենյաց
10.	Արթիկ համայնքի Սարալանջ բնակավայրի մշակույթի տան ջեռուցման համակարգի անցկացում	7000. 0	Սարալանջ
11.	ՀՀ Ծիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կարիքների համար Լեռնակերտ, Սպանդարյան, Գեղանիստ, Գետափ, Անուշավան, Սարատակ, Մեծ Մանթաշ բնակավայրերում վերանորոգման աշխատանքներ	13165,9	Լեռնակերտ, Սպանդարյան, Գեղանիստ, Գետափ, Անուշավան, Սարատակ, Մեծ Մանթաշ
12.	Արթիկի գերեզմանոցի ճանապարհի վերանորոգում	10 856,4	Արթիկ
13.	Կամուրջների վերանորոգում	7 899,6	Արթիկ, Պեմգաշեն
14.	Կանգառների տեղադրում	597.0	Նահապետական
Ընդամենը		1985759,0	
Ոլորտ 11.Կրթություն			
1.	Համայնքի բնակավայրերում նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցում	676034.0	13 բնակավայր
2.	Բնակավայրում արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում	331035.0	8 բնակավայր
	Ընդամենը	1007069.0	-
Ոլորտ 12. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
1.	Համայնքի բնակավայրում մշակութային գործունեության ապահովում, այդ թվում	158437.0	8 բնակավայր
2	Բնակավայրերում գրադարանների գործունեության ապահովում	46735.0	Բոլոր բնակավայրերում
3	Մշակութային միջոցառումների կազմակերպում	24000.0	ընդհանուր համայնքային
4	Երիտասարդությանն ուղղված միջոցառումներ, <<Արթիկի երիտասարդական տան>> գործունեության ապահովում	8 575.0	Արթիկ քաղաք
5	Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների գործունեության ապահովում	87702.0	Ընդհանուր համայնքային

Ընդամենը		332449,0	
Ոլորտ 13. Առողջապահություն			
	2025 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	
Ընդամենը		-	-
Ոլորտ 14. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
1.	Համայնքի բնակավայրում մարզադպրոցների գործունեության ապահովում	101361.0	
2.	Մարզադպրոցի վերանորոգում և գույքի ձեռք բերում	3000.0	
3.	Խաղահրապարակների հիմնում	35597,0	Արթիկ, Տուֆաշեն, Վարդաքար
Ընդամենը		139958,0	-
Ոլորտ 15.Սոցիալական պաշտպանություն			
1.	Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին	18000.0	Ընդհանուր համայնքային
Ընդամենը		18000.0	
Ոլորտ16. Զբոսաշրջություն			
	2025 թվականին զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարման բնակիչների մասնակցություն			
	Հանրային քննարկումների կազմակերպում	-	-

Աղյուսակ 4.ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
Ոլորտ2 .Պաշտպանության կազմակերպում, քաղաքացիական պաշտպանություն			
1.	Բազմաբնակարանային շենքերի նկուղների մաքրում		Արթիկի Լճառ թաղամասի 6 բազմաբնակարանների , Ստեկլումաշ թաղամասի բազմաբնակարաններ
2.	Տարհանման սխեմաների տեղադրում 58 հատ	500.0	ՀՈԱԿ-ներում 34 հատ, վարչական շենքերում 23 հատ, Արթիկի համայնքապետարանի շենքում 1 հատ
Ընդհանուր		500.0	-
Ոլորտ 4. Գյուղատնտեսություն			
1.	Ծարժական գյուղատնտեսական շուկայի կազմակերպում	19 500.0	Ընդհանուր համայնքային/դրամաշ նորհային ծրագիր/

Ընդհանուր		19 500.0	-
Ոլորտ 5. Անասնաբուծություն, բուսասանիտարիա			
1.	Թափառող շների ստերջացում	4000.0	Ընդհանուր համայնքային
Ընդհանուր		4000.0	-
Ոլորտ 6.Տրանսպորտ			
1.	Երթուղային միկրոավտոբուսների ձեռքբերում՝ ներքաղաքային ուղևորափոխադրումներ կազմակերպելու համար	24 750,0	Ընդհանուր համայնքային/դրամաշնորհային ծրագիր/
Ընդհանուր		24 750,0	-
Ոլորտ 8. Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի Յու. Գազարինի անվան զբոսայգու վերանորոգում	19 500.0	Արթիկ բնակավայր/դրամաշնորհային ծրագիր/
2.	Պեմգաշեն բնակավայրում այգու բարեկարգում	15 109.9	Պեմգաշեն/դրամաշնորհային ծրագիր/
3.	Պեմգաշեն բնակավայրում մոտ 80 հա տարածության վրա անտառի հիմնում		Պեմգաշեն/դրամաշնորհային ծրագիր/
Ընդհանուր		34 609,9	-
Ոլորտ9. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի կենտրոնական հրապարակի օղակաձև հատվածի բարեկարգում, նոր շատրվանների տեղադրում		Արթիկ բնակավայր
2	Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգում, խաղահրապարակների տեղադրում	40 570,0	Արթիկ բնակավայր
3.	Արթիկ համայնքի Սարալանջ բնակավայրի մշակույթի տան ջեռուցման հանակարգի անցկացում	15000,0	Սարալանջ բնակավայր
Ընդհանուր		55570,0	-
Ոլորտ12 .Մշակույթ, կրթություն			
1.	Մսուր-մանկապարտեզների կառուցում՝ յուրաքանչյուրը 144 տեղիցորոշամբ	1 400 000.0	Արթիկ, Արևշատ/ՀՀ կառավարություն/
2.	Արթիկ համայնքում դպրոցների կառուցում	6 350 000,0	Հայրենյաց, Սարատակ Գետափ, Փոքր Մանթաշ, Արթիկ /ՀՀ կառավարություն/
3.	Արթիկ համայնքի <<Արթիկի Տ. Մանսուրյանի անվան մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում	117 000,0	Արթիկ /ՀՀ կառավարություն/
Ընդհանուրը		7867000,0	
Ոլորտ13 .Առողջապահություն			
1.	Արթիկի հիվանդանոցի կառուցում	3 300 000,0	Արթիկ/ՀՀ կառավարություն/
Ընդհանուրը		3 300 000,0	

Ոլորտ10. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
1.	Արթիկ համայնքի Տուֆաշեն բնակավայրում մինիֆուտբոլի դաշտի կառուցում	4 000,0	Տուֆաշեն/դրամաշնորհ/
2.	Արթիկ բնակավայրի Տոնականյան 23 և 24 բանգմաբնակարան շենքերի հարակից տարածքում ունիվերսալ բազմաֆունկցիոնալ բակային սպորտային խաղահրապարակի կառուցում ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի համար:	15 000,0	Արթիկ բնակավայր/դրամաշնորհ/
Ընդհանուրը		19 000,0	

Աղյուսակ 5.ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
Ոլորտային նպատակ Բարելավել համայնքի բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը Ոլորտի նպատակ. •Ապահովել տեղական ինքնակառավարումը Արթիկ բազմաբնակավայր համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ •Կազմակերպել համայնքային գույքի կառավարումը, նպատակային օգտագործումը		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, 92% ✓ Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, 1% ✓ Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում,22,5% ✓ ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, 92%			
Ծրագիր 1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում					
Ծրագրի նպատակ Ապահովել համայնքի աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավում, 5%	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2025թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: Անուրդների, մրցույթների մասնակիցների բացակայություն
Միջանկյալ արդյունք 1 Ապահովվել է	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Համայնքի աշխատակազմի	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան	Համայնքի ղեկավար, աշխատակազ	2025թ. հունվար-	Համապատասխան մարդկային և ֆինանսական

